



Վերանայվել է 2020 թվականի ապրիլին:

4 ծրագիր, որ կարող է օգնել Ձեզ վճարել Ձեր բժշկական ծախսերը

Գոյություն ունեն դաշնային և նահանգային ծրագրեր՝ նախատեսված Medicare ծրագրում ընդգրկված այն մարդկանց համար, ում եկամուտն ու միջոցները ցածր են որոշակի սահմանային շեմից: Այս ծրագրերի օգնությամբ Դուք կարող եք խնայել առողջապահական ծառայությունների և դեղատոմսով դուրս գրվող դեղերի հետ կապված ծախսեր կատարելիս: Այս փաստերի թերթիկը պարունակում է տեղեկություններ հետևյալ ծրագրերի վերաբերյալ

- Medicaid ծրագիր
- Medicare-ի խնայողությունների ծրագրեր
- Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտի (SSI) նպաստներ
- Հավելյալ օգնություն

Medicaid ծրագիրը

Medicaid-ը համատեղ դաշնային և նահանգային ծրագիր է, որն օգնում է վճարել բժշկական ծախսերը, եթե դուք սահմանափակ եկամուտ ունեք և (կամ) համապատասխանում եք այլ պահանջներին:

Յուրաքանչյուր նահանգ տարբեր պահանջներ ունի եկամտի և ռեսուրսների վերաբերյալ և որոշում է, թե ով է պայմանունակ, որ ծառայություններն են վճարվում և այդ ծառայությունների արժեքը:

Առավել մանրամասն տեղեկությունների և ծրագրից օգտվելու Ձեր իրավունքը պարզելու համար զանգահարեք Բժշկական օժանդակության (Medicaid) հարցերով նահանգային գրասենյակ: Այցելե՛ք [Medicare.gov/contacts](https://www.medicare.gov/contacts) կայքը կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Medicare-ի խնայողությունների ծրագրերը

Եթե Դուք ունեք սահմանափակ եկամուտ և միջոցներ, Դուք թերևս կարող եք օգնություն ստանալ Ձեր նահանգից Medicare-ի հետ կապված Ձեր ծախսերը վճարելու համար, եթե Դուք բավարարում եք որոշակի պայմաններ:

Գոյություն ունի Medicare-ի խնայողությունների ծրագրերի 4 տեսակ՝

Medicare ծրագրից օգտվելու իրավունք ունեցող շահառուի (QMB) ծրագիր. Եթե դուք պայմանաւորված եք QMB ծրագիրը կօգնի ձեզ վճարել Medicare-ի Մաս Ա-ի (Հիվանդանոցային ապահովագրություն) և կամ Medicare Մաս Բ-ի (Բժշկական ապահովագրություն) ապահովագրավճարները: Բացի դրանից, Medicare մատակարարներին չի թույլատրվում ձեր հաշվում ընդգրկել Medicare նվազեցվող գումարները, համաապահովագրությունը և համավճարները, երբ դուք Medicare-ի կոցմից վճարվող ծառայություններ և առարկաներ եք ստանում՝ բացառությամբ հիվանդանոցների՝ դեղատոմսով բաց թողնվող դեղորայքի:

Medicare-ի՝ ցածր եկամուտ ունեցող շահառուի հատուկ (SLMB) ծրագիր. օգնում է վճարել միայն «B» մասի ապահովագրավճարները:

Ծրագրից օգտվելու իրավունք ունեցող անհատի (QI) ծրագիր. օգնում է վճարել միայն «B» մասի ապահովագրավճարները: Դուք պետք է դիմեք QI ծրագրի նպաստների համար յուրաքանչյուր տարի, իսկ դիմումները բավարարելիս առաջնահերթությունը տրվում է առաջինը ներկայացված դիմումներին:

Ծրագրից օգտվելու իրավունք ունեցող հաշմանդամություն ունեցող և աշխատող անհատների (QDWI) ծրագիր. օգնում է վճարել միայն «A» մասի ապահովագրավճարները: Դուք կարող եք օգտվել այս ծրագրից, եթե Դուք ունեք հաշմանդամություն և աշխատում եք:

Նշված ծրագրերի անունները և դրանց իրականացման կարգը կարող են տարբերվել ըստ նահանգների: Medicare-ի խնայողությունների ծրագրերը հասանելի չեն Պուերտո Ռիկոյում և ԱՄՆ Վիրջինյան կղզիներում:

Զանգահարե՛ք կամ այցելե՛ք Բժշկական օժանդակության (Medicaid) հարցերով նահանգային գրասենյակ և պահանջե՛ք տեղեկություններ Medicare-ի խնայողությունների ծրագրերի մասին: Ձեր նահանգի հեռախոսահամարն իմանալու համար այցելե՛ք [Medicare.gov/contacts](https://www.medicare.gov/contacts): Դուք նաև կարող եք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտի (SSI) նպաստները

ԼՍԵ-ն (SSI) կանխիկով նիսաստ է, որը վճարվում է Սոցիալական ծախսերի ծառայության կողմից սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեցող մարդկանց, որոնք կույր են, 65 կամ ավելի տարեկան են կամ անկարողություն ունեն: ԼՍԵ-ն (SSI) նպաստները նույն ը չեն, ինչ որ Սոցիալական ապահովության ծառայության թոշակի նպաստները:

Դուք կարող եք այցելել [benefits.gov/ssa](https://www.benefits.gov/ssa) և օգտագործելով «Նպաստներից օգտվելու իրավունքը պարզելու համար հարցաշարը» («Benefit Eligibility Screening Tool») պարզել, թե արդյոք Դուք իրավունք ունեք օգտվելու Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտից (SSI) կամ այլ նպաստներից: Առավել մանրամասն տեղեկությունների համար զանգահարե՛ք Սոցիալական ապահովության ծառայություն 1-800-772-1213 հեռախոսահամարով կամ

կապ հաստատե՛ք Սոցիալական ապահովության ծառայության Ձեր տեղական գրասենյակի հետ: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-325-0778 հեռախոսահամարով:

Ծանոթագրություն` Պուերտո Ռիկոյում, ԱՄՆ Վիրջինյան կղզիներում, Գուամում կամ Ամերիկյան Մամուայում բնակվող մարդիկ չեն կարող ստանալ Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտ:

Հավելյալ օգնությունը

Եթե սահմանափակ եկամուտ և ռեսուրսներ ունեք, հնարավոր է, կարողանաք որակավորվել Լրացուցիչ օգնության (Extra Help) համար՝ ձեր Medicare՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի համար վճարելու նպատակով: Հավելյալ օգնությամբ Ձեզ տրամադրվող գումարի չափը հաշվարկվում է Ձեր եկամտի և միջոցների հիման վրա:

Եթե Դուք իրավունք ունեք օգտվելու Medicaid ծրագրից, Medicare-ի խնայողությունների ծրագրերից որևէ մեկից կամ Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտից (SSI), ապա Դուք ավտոմատ կերպով իրավունք եք ստանում օգտվելու Հավելյալ օգնությունից՝ Դեղատոմսով դուրս գրվող դեղերի համար Medicare-ի ապահովագրական ծածկույթի դիմաց վճարելու համար: Եկամտի և միջոցների չափը կարող է փոփոխության ենթարկվել յուրաքանչյուր տարի: Ծրագրից օգտվելու Ձեր իրավունքը հստակ պարզելու միակ միջոցը Բժշկական օժանդակության (Medicaid) հարցերով Ձեր նահանգային գրասենյակի միջոցով դիմում ներկայացնելն է:

Հավելյալ օգնության մասին առավել մանրամասն տեղեկությունների համար այցելե՛ք Medicare.gov/publications՝ «Դեղատոմսով դուրս գրվող դեղերի համար Medicare-ի ապահովագրական ծածկույթի մասին Ձեր ուղեցույցը» գրքույկը դիտելու համար:

Առավել մանրամասն տեղեկությունների համար

- Չանգահարե՛ք կամ այցելե՛ք Բժշկական օժանդակության (Medicaid) հարցերով նահանգային գրասենյակ և պահանջե՛ք տեղեկություններ Medicaid ծրագրի և Medicare-ի խնայողությունների ծրագրերի մասին: Նշված ծրագրերի անունները և դրանց իրականացման կարգը կարող են տարբերվել ըստ նահանգների: Չանգահարե՛ք, եթե կարծում եք, որ Դուք իրավունք ունեք օգտվելու այս ծրագրերից որևէ մեկից, նույնիսկ եթե համոզված չեք դրանում:
- Չանգահարե՛ք Առողջության ապահովագրության հարցում աջակցության Ձեր նահանգային ծրագրի (SHIP) ներկայացուցիչներին՝ առողջության ապահովագրության վերաբերյալ անվճար, անհատական խորհրդատվություն ստանալու համար: Ձեր նահանգային գրասենյակի հեռախոսահամարը ձեռք բերելու համար այցելե՛ք shiptacenter.org կամ զանգահարե՛ք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Սոցիալական ապահովության լրացուցիչ եկամտի (SSI) մասին տեղեկություն ստանալու կամ Հավելյալ օգնության համար դիմելու նպատակով այցելե՛ք benefits.gov/ssa կամ զանգահարե՛ք Սոցիալական ապահովության ծառայության 1-800-772-1213 հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-800-325-0778 հեռախոսահամարով:

Դուք իրավունք ունեք ստանալու Medicare տեղեկատվությունը հասանելի ձևաչափով, ինչպիսիք են մեծ տառատեսակները, Բռայլի այբուբենը կամ աուդիոն: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելեք [Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice](https://www.Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice) կայքէջը կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով լրացուցիչ տեղեկությունների համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877- 486-2048 հեռախոսահամարով:

Վճարված է Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից:

